ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2021թվականի N 09-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով

համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 13-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԱՐԱՏ-4 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՈՎ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 23-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

Որոշման մեջ՝

1. վերնագրում՝ <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԱՐԱՏ-4 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ (ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՈՎ) ՆԱԽԱԳԻԾԸ>> փոխարինել <<ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ(ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ)>>-ով:

2. տեքստում՝ <<կետով և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգով հիմք ընդունելով Դալար համայնքի ղեկավարի կողմից ներկայացված <<Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>> կողմից հաստատված դրական եզրակացությունը>> փոխարինել <<մասով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձանաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը>>-ով:

<<ՀՀ Արարատի մարզի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Դալար համայնքի մասով) նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային

և գործառնական նշանակությունների փոփոխությունները համաձայն աղյուսակի/աղյուսակը կցվում է/:>> փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Դալար համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

3. 1 կետից հետո լրացնել 2 և 3 կետերը.՝

<<2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի <<Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին(Այսուհետ՝ գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան .

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:>>:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2021թվականի N 08-Ա

ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով,

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դալար համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համաձայն հավելվածի

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2021թվականի N 07-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ի ԹԻՎ 03 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը

Դալար համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 22-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը՝

1. Դալար համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2. Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2020թվականի մայիսի 13-ի թիվ 23-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ**